

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՔԱՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Վարդան Պետրոսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան

ՀՀ, Երևան, Արմյան 52ա

Էլ. հասցե՝ vz.petrosyan@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 05.08.2022, գրախոսվել է 11.08.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-120

Ներածություն

Ընդհանուրինդեվոպական լեզվում եռաբարբառներ և քառաբարբառներ չեն վերականգնվում, հետևաբար հին հայերենի եռաբարբառային և քառաբարբառային կազմությունները չեն կարող հ.-ե. ժառանգություն լինել: Բացառություն են թվում երկու բառ՝ *նուաղ* (?) «թույլ, տկար, աղուտ» (<*ne-*yal*- «ոչ ուժեղ»)¹ և *աղուխ* (<*(*a*)lōpeku-)², որոնցից առաջինում առկա է հ.-ե. **el*a > հյ. *ուա*, իսկ երկրորդում՝ հ.-ե. **ōpe* > հյ. *ուլ* համապատասխանությունը: Այդ համապատասխանությունների առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը:

1) Հ.-ե. **el*a հնչյունական հաջորդականությունը չի կարող համարվել եռաբարբառ, որից ենթադրաբար զարգանար հայերենի *ուա* եռաբարբառակերպը, ասենք, **e/o* հերթագայությամբ (ձայնդարձի լրիվ աստիճան), որովհետև. Ա) Եթե ընդհանուրինդեվոպական լեզվում եռաբարբառ լիներ, ապա դրա անդրադարձը (ռեֆլեքսը), հայերենից բացի, կպահպանվեր հ.-ե. գոնե մեկ-երկու հին լեզվում ևս, ինչպես որ հ.-ե. երկբարբառներն են պահպանվել հին լեզուների գերակշիռ մասում³: Բ) *ne-*yal*- բառահիմքը երկ-

¹ Զահուկյան 2010, 573: Հ. Աճառյանը *նուաղ* դասում է չստուգաբանվածների շարքին, մեր կարծիքով, սակայն, հենց իր կողմից վկայակոչված ցեղակից լեզուների օրինակները (հմմտ. լիտվ. *nōvyti* «չարչարել, տորրել, վնասել», չեխ. *unaviti* «հոգնեցնել», ռուս. *уныть* «տխրել, քաջությունը կորցնել, թուլանալ», գոթ. *naufs* «կարիք»), որոնց հիման վրա Ռ. Տրոտմանն առաջարկել է **nūjō*- «անցնել, գոնաթափ լինել» նախաձևը (Աճառյան 1977, 468) բավարար հիմք են *նուաղ* բառին հ.-ե. ծագում վերագրելու համար: Հաշվի առնելով հայերեն *նուաղի* հնչյության լազմը՝ ըստ իս՝ ընդունելի պիտի համարել Գ. Զահուկյանի առաջարկած նախաձևային տարբերակը՝ *ne-*yal*- «ոչ ուժեղ», թերևս՝ իբրև բարբառային զուգաձևություն **nūjō*- նախաձևի կողքին:

² Ըստ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի՝ հ.-ե. **alōpeku*- նախաձևից (Հյուբշման 2003, 415, Աճառյան 1971, 135):

³ Հ.-ե. հին լեզուներից, ըստ համեմատական հնդեվոպաբանության տվյալների, երկբարբառ չեն ունեցել խեթերենը և թոխարական լեզուները (Фридрих 1952, 43-54, Крайзе 1959, 50-54, Иванов 1963, 41-99):

վանկ է, որի կազմում *u* ծայնորդն անցնում է հաջորդ վանկին: Ըստ այդմ, վանկաբաժանը համընկնում է ձևային կարի հետ (հմմտ. *uol*): Դա նշանակում է, որ նշված բառահիմքում չի կարող տարբերակվել եռաբարբառ կամ եռաբարբառակերպ, որովհետև չի պահպանվում դրա համար անհրաժեշտ հիմնական պահանջներից մեկը՝ որպես մեկ բարդ հնչույթ՝ մեկ վանկի կազմում արտաբերվելու պայմանը: Գ) Հ.-ե. հիմք-լեզվում վերականգնվող երկբարբառների առաջին բաղադրիչը, որպես կանոն, հիմնական ծայնավորն է՝ կարճ կամ երկար տարբերակով՝ **a/ā*, **e/ē*, **o/ō*, իսկ երկրորդ բաղադրիչը ծայնավորական **u-*ն է կամ **i-*ն, այլ ոչ թե ծայնորդական **u/(w)*-ն կամ **i/(y)*-ն: Այսինքն՝ ընդհանուրինդեվրոպականում եղել են, օրինակ, **au*, **oi*, **eu*, **ōu* և այլ երկբարբառներ, բայց չեն եղել **ua*, **ue* կամ **io* երկբարբառներ⁴:

2) Ինչ վերաբերում է **-ōpe* հնչյունակապակցությանը, թեպետև առանձին դեպքերում, մասնավորապես՝ բառամիջում, հ.-ե. **p-*ն հայերենում անցել է *ι* (*u*)-ի (հմմտ. **epi* > հյ. *tu* «և, նաև», **opi* > հյ. *ni* «ու (շաղկապը)», **optō* > հյ. *niə*, **ōpne* > հյ. *ունել (ունիմ)* «ունենալ, բռնել», **sūop-no-s* > հյ. *քուն* և այլն), բայցևայնպես ընդհանուրինդեվրոպականում **-ōpe* եռաբարբառ (եռաբարբառակերպ) չէր կարող տարբերակվել թեկուզև իր կազմում շրթնային խուլ հայական (**p*) ունենալու պատճառով:

Եռաբարբառակերպերի կազմավորումը և իրանական փոխառությունները

Սկզբունքորեն հնարավոր է հին հայերենի եռաբարբառակերպերի և քառաբարբառակերպերի առաջացման երեք տարբերակ: Այն է՝ այդ կազմությունները. 1) հայերենի բառակազմական (/բառաձևակազմական) գործընթացների արդյունք են, 2) հայերենին անցնել են փոխառյալ բառերի միջոցով, 3) նշված երկու գործընթացների համադրության արդյունք են:

Թե նշված գործընթացներից հատկապես որը և ինչ չափով է դեր խաղացել հին հայերենի վերոհիշյալ բաղադրիչների առաջացման գործում, այդ մասին կարելի է որոշակի դատողություններ անել միայն հիմնախնդրի համակողմանի քննությունից հետո: Հետևաբար եռաբարբառակերպերի և քառաբարբառակերպերի տարածամանակյա քննությունն անհրաժեշտ է դարձնում մեկ անգամ ևս անդրադառնալ դրանց կառուցվածքային կաղապարներին (համաժամանակյա հայեցակետ), որքանով որ դրանք ներառում են բառա-

⁴ Мейе 1938, 134-138, Прокош 1954, 92-93, Семереньи 1980, 52-54, Савченко 1974, 87-89, Красухин 2004, 64-66, Общее языкознание: методы лингвистических исследований 1973, 77. Իհարկե, կան նաև առավել տարածված այդ պատկերացումից շեղումներ. ոմանք տարբերակում են նաև **ai*, **au*, **ēl*, **ēr*, **en*, **on* տիպի երկբարբառներ (Мейе 1938, 137-139, Прокош 1954, 92, Красухин 2004, 64-66), բայց դրանք ունեն մասնավոր բնույթ:

կազմական տարբեր բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ծագումնաբանական տարբեր գործընթացների արդյունք լինել: Ըստ այդմ.

1) Հին հայերենի *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի*, *ուո* եռաբարբառակերպերը ներկայացնում են հետևյալ բառակազմական տիպերը:

Ա) Կազմավորվել են «բնի ձայնավոր + (ւ կիսաձայն) + վերջածանցի ձայնավորական բաղադրիչ» կաղապարով (հմմտ. *արդուած* «հորինվածք, ձև», *դիպուած* «դեպք, անցք», *հասարուած* «հորինվածք, կերտվածք», *յօղուած* «կապակցություն, հորինվածք», *շրջուած* «շրջադարձ, փոփոխություն» և այլն): Ինչպես երևում է, նշված կաղապարով բառերում *ուա* եռաբարբառակերպը հանդիպում է *-ուած* վերջածանցի կազմում, որը, ըստ Գ. Զահուկյանի, «բայական ու հիմքակազմ տարրի» և *-ած* վերջածանցի բաղադրություն է⁵: Իսկ *ած-ը*, նրա կարծիքով, «ծագում է *ած-ել* բայի արմատից»⁶, հետևաբար, օրինակ, *դիպուած* բառն ունի «(դէպ >) դիպ + ու + ած» կառուցվածքը: Մեր կարծիքով, սակայն, *-ուած* վերջածանցի *ու-*ն, առաջացել է *դէպ* «եղելություն, պատահմունք» գոյականի եզ. սեռ.-տր. ձևի՝ *դիպի*, և *-ած* վերջածանցի միավորման արդյունքում՝ «դիպի + ած», ուր *ի* և *ա* ձայնավորների միջև հայտնվել է *ւ* կիսաձայնը, որքանով հայերենին բնորոշ չէր երկու ձայնավորի անմիջական հաջորդականությունը մեկ վանկում: Ինչն նախորդող դիրքում տեղի է ունեցել *ի* (*i*) > *ո* (*o*) հնչյունափոխություն, և բառը, նախ, արտաբերվել է [**դիպիւած* / **dipizac*], ապա՝ [*դիպուած* / *dipouac*]: Այդպիսի հնչյունափոխության բուն պատճառը կարող էր լինել բառային շեշտի տեղաշարժը դեպի աջ՝ միաձուլման հետևանքով առաջացած *-ուած* վերջածանցի վանկարարի վրա՝ *դէպ > դիպի՝ > դիպուա՛ծ* (հմմտ. նաև՝ *թի՛ւ*, *բայց՝ թուո՛յ*, *անի՛ւ*, *բայց՝ անուո՛յ*): Իսկ *ւ* (*u*)-ը երկու ձայնավորի միջև կատարել է յուրօրինակ ձայնակապի դեր, ինչպես որ արդի հայերենում այդպիսի դեր կատարում է *յ* (*y*) կիսաձայնն *ա* և *ո* ձայնավորների և նրանց հաջորդող մեկ այլ ձայնավորի միջև դիրքում (հմմտ. *արքայական*, *կաթսայատուն*, *շղթայել*, *բարոյական*, *ցոյական* և այլն)⁷:

Բ) Կազմավորվել են «բնի ձայնավոր + (ւ կիսաձայն) + ձայնավորական վերջավորություն (/վերջավորության ձայնավորական բաղադրիչ)» կաղապարով (հմմտ. *կիզուի* «այրում էի» («կիզում» բայի անց. անկ. ժ. եզ. թ. 1-ին դ.), *կիզուաք* «այրում էինք» («կիզում» բայի անց. անկ. հզն. թ. 1-ին դ.), *հեղուաք*

⁵ Զահուկյան 1998, 32:

⁶ Զահուկյան 1998, 32: Յ. Գրեպինը հնարավոր է համարել նաև *ած-ի* հնդեվրոպական ծագումը՝ հ.-ե. *gʷ > hj*. ծանցումով (Զահուկյան 1998, 32):

⁷ Ըստ իս՝ դրա վկայությունը պիտի համարել ոչ միայն վերոհիշյալ դեպքերը, երբ *ա-ից* և *ո-ից* հետո լսվող *յ-ն* արտահայտվում է գրությամբ, որովհետև սկսում է գործել հին հայերենին բնորոշ՝ «բառը չէր կարող ավարտվել *ա* և *ո* ձայնավորներով» սկզբունքը (որոշ բացառություններով, ինչպես՝ *գիտենա՛* «գիտցիր», *խոկա՛* «խորհիր», *հասո՛* «հասցրու», *մապո՛* «մոտեցրու» և այլն), այլև երբ ձայնակապը գրությամբ չի արտահայտվում, բայց արտասանվում է թույլ կերպով, ինչպես՝ [*գրեի*], [*ժողովածունում*] և այլն:

«թափում էինք» («հեղում» բայի անց. անկ. ժ. հզն. թ. 1-ին դ.), *ջեռնուիր* «տաքանում էր» («ջեռնում» բայի անց. անկ. ժ. եզ. թ. 2-րդ դ.) և այլն):

Գ) Կազմավորվել են «հիմքի հնչյունափոխված երկբարբառակերպ / (ծայնավոր) + բնի ձայնավոր» կաղապարով (հմմտ. *աննոց* (= անիւ+ո+ց) «անիվների» («անիւ» գոյ. հզն. թ. սեռ.-տր. հլ.), *թոնց* (= թիւ+ո+ց) «թվերի» («թիւ» գոյ. հզն. թ., սեռ.-տր. հլ.), *տոնոլ* (= տու⁸+ո+լ) «տվող» («տալ» բայի ենթակայ. դերբ.) և այլն):

2) Իրանական փոխառություններում վերոհիշյալ եռաբարբառակերպերի դրսևորումները հայկական ձևափոխությունների արդյունք են (հմմտ. *դժուար* (< իրան. *dužvār*. պրթ. *djw'r* (*dižvār*), *dušxvār*, (պազ.), պ. *dušvār*),- *դրուար* (< հ.պ. **druvata*-. ավ. *drvatāt*-, մ.պ. *drūt* «առողջություն», պ. *durōd* «օրհնություն. բարեմաղթություն. աղոթք»),- հյ. *նուազ* «զավաթ, բաժակ» (< իրան. **nivāg*. պ. *nifāy*, *nufāy*),- *սրուակ* (< ավ. *sr(u)vā*-, մ.պ. *srūv*, *surū*, *surūn* «եղջյուր» և այլն),- *արուեստ* (< իրան. **aruvast*. հ.պ. *aruvasta* «ամրություն, առույգություն, պնդակազմություն», պրթ. **wst* «առաքինություն»), - *նուէր* (< իրան. *nivēd*. ավ. *nivaēd* «ձոնել, նվիրել», մ.պ. *nivēdēm* «ձոնում եմ, նվիրում եմ»), - *պապուէր* (< իրան. *patvēd*. ավ. *pati-vaeđ* «ծանուցել, իմացնել», մ.պ. (մնք.) *ptvyd* «ծանուցում», սողդ. *ptwđ* «հանձնել»),- *նուիրակ* (< իրան. Լ. **nivēdak* «բուժակ». ԻԼ. *nivēdak* «ազդարար, պաշտոնյա». պ. *nuvīd* «լուր») և այլն): Ընդ որում, իրանական փոխառությունների եռաբարբառային կազմությունները հնարավոր չէ կառուցվածքային վերլուծության ենթարկել հայերենի բառակազմության սկզբունքներով: Օրինակ՝ իրանական լեզուներից, ըստ ամենայնի՝ պահլավերենից փոխառյալ *նուէր* (< պհլ. *nivēd*) բառը բառակազմորեն վերլուծելի չէ հայերենում, բայց պահլավերենում այն տրոհվում է *ni*- նախադրության և *vēd* արմատի: Այդ բառի ավելի հին ձևն է ավ. *nivaēd*-ը՝ *vaeđ* «գիտենալ, ճանաչել» արմատով⁹: Նույնը վերաբերում է *պապուէր* բառին, որի պահլավական համարժեքի՝ **patvēd* «ծանուցում, հայտարարություն», կազմում տարբերակվում են **pat*- նախադրությունը և **vēd* «գիտենալ» արմատը: Ավելի հին ձևն է ավ. *paitivaēd(a)*-ն «ծանուցել, իմացնել»¹⁰: Ըստ էության, երկու բառերի բուն արմատն է պհլ. **vēd* (/ավ. *vaeđ(a)*) (<հ.-ե. **uoid* / **ueid* «գիտենալ» ձևից), հետևաբար բառային իմաստների տարբերությունները պայմանավորում են նախադրությունները (իմա՝ նախածանցները):

Առաջին հայացքից կարող է թվալ, որ նշված բառերից բաղադրված, օրինակ, *պապուիրան* և *նուիրակ* բառերի կառուցվածքում տարբերակվող *-ակ* և *-ան* մասնիկները (իմա՝ վերջածանցները) բացատրելի են հայերենի բառակազմական օրինաչափություններով (հմմտ. «*նուիր* (<*նուէր*) + *ակ*», «*պա-*

⁸ Տալ բայի կատարյալի հիմքը, որից կազմվել են անցյալ կատարյալի և բուն հրամայականի ձևերը ներգործական և կրավորական խոնարհումներում, անցյալ և ենթակայական դերբայների ձևերը:

⁹ Աճառյան 1977, 470:

¹⁰ Աճառյան 1979, 49:

տուիր (<պատուէր) + *ան*»), որովհետև հին հայերենն ուներ *-ակ* և *-ան* կենսունակ վերջածանցները (հմմտ. *աղանեսակ* («աղանի + ակ»), *աղիասակ*, *գաւառակ*, *դրօշակ*, *սոնակ* «սոնի, առանցք» և այլն, - *արգելան* «փակ տեղ. բանտ», *իշխան*, *խարան*, *խթան*, *վզան* «բարձրավիզ» և այլն): Իրականում, սակայն. 1) այդ բառային կառույցներն ամբողջական փոխառություններ են պահլավերենից, և նշված վերջածանցներն առկա են փոխատու լեզվի բառային կառուցվածքում (հմմտ. *նուիրակ* (<*nivēd-ak), *պատուիրան* (<*patvēd-ān)), 2) հայերենի *-ակ* և *-ան* վերջածանցները, ըստ ամենայնի, ունեն իրանական ծագում¹¹, չնայած որ Գ. Զահուկյանը դրանց որոշ կիրառություններում հնարավոր է համարում նաև բաղարկությունը հ.-ե. մասնիկների հետ (հմմտ. *-kon (> -կ(ն)) ածանցից՝ *-ակ*-ի դեպքում, *-no-/-ā- ածանցից (-ā/ə հիմքակազմ տարրով)՝ *-ան* մասնիկի դեպքում)¹²:

Վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ իրանական փոխառությունների *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի* եռաբարբառակերպերի ծագումնաբանական քննությունը հանգեցնում է իրանական բառի կառուցվածքային կաղապարը հիմք ընդունելու անհրաժեշտության, որովհետև առանց դրա հնարավոր չէ բացատրել, ասենք, *ուե*, *ուա* եռաբարբառակերպերի առաջացումը, օրինակ, *արուեստ*, *դժուար*, *դրուար*, *նուազ*, *նուազ* բառերի կազմում:

Հայերենի իրանական փոխառությունների *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի* եռաբարբառակերպերի զուգադրումը բուն իրանական ձևերում դրանց համարժեքների հետ ցույց է տալիս, որ կառուցվածքային առումով ընդհանրությունները մեծ են հատկապես ընդհանուր իրանականի, հին պարսկերենի և ավեստայի ձևերի հետ, որոնցում, իբրև կանոն, հայերենի եռաբարբառակերպի դիմաց առկա է եռահնչյուն կամ առնվազն երկհնչյուն կապակցություն (հմմտ. հյ. *դժուար* - իրան. *dušvār*, - *դրուար* - հ.պ. **druvata*-, ավ. *drvatāt*-, - հյ. *նուազ* - իրան. **nivāg*-, հյ. *սրուակ* - ավ. *sr(u)vā*-, - հյ. *արուեստ* - իրան. **aruvast*, հ.պ. *aruvasta*-, - հյ. *նուէր* - իրան. *nivēd*. ավ. *nivāēd*-, մ.պ. *nivēdēm*-, - հյ. *պատուէր* - իրան. *patvēd*, ավ. *paitivāēd(a)*-, - հյ. *նուիրակ* - իրան. I. **nivēdak*, II. *nivēdak* և այլն), ի տարբերություն պահլավերենի, առհասարակ՝ միջին պարսկերենի ձևերի, որոնք ունեն մեկ կամ երկու բաղադրիչով համարժեք (հմմտ. հյ. *դժուար* - պրթ. *djw'r* (*dižvār*), մ.պ. *dušxvār*-, - հյ. *դրուար* - մ.պ. *drūt*-, - հյ. *սրուակ* - մ.պ. *srūv*, *surū*, *surūn*-, - հյ. *արուեստ* - պրթ. *'wst*-, - հյ. *պատուէր* - մ.պ. (մնք.) *ptvyd*-, սողդ. *ptwē*- և այլն): Իրանագիտության մեջ առկա տեսակետի համաձայն, ավեստայում (հնարավոր է՝ նաև հին պարսկերենում), միջին պարսկերենում, մասնավորապես՝ պարթևերենում, *v*-ով նշանակվել է շրթնային ձայնորդը կամ ձայնեղը, որի հնչյունական համարժեքն իրանական որոշ լեզուներում *w* ձայնորդն է (հմմտ. իրան. **vafra* -> ավ. *vafra*-, պրթև. *vafr*

¹¹ Молчанова 1978, 62, Расторгуева, Молчанова 1981, 68-69, 73, 194-195.

¹² Զահուկյան 1998, 8, 11-12:

(/wfr) ման. *wpr* «ծյուն», իրան. **vāta-* > ավ. *vāta-*, ման. *w'd*, վաղ պարթև. *vat* (*w't*) «քամի», իրան. **harva-* > ավ. *haurva-*, հն պարսկ. *haruva-* «ամբողջ, բոլոր», պարթև. *harv* (*hrw*) «ցանկացած, յուրաքանչյուր» և այլն¹³: Եթե դա այդպես է, ուրեմն *uva* (հմմտ. հ.պ. **druvata-*), *ivā* (հմմտ. իրան. **nivāg*) և *ivē* (հմմտ. իրան. **nivēḍak*) հնչյունակապակցությունները եռաբարբառակերպեր էին, իսկ *uv-*ը (հմմտ. մ.պ. *srūv*) և *vā-*ն (հմմտ. մ.պ. *dušxvār*)՝ երկբարբառակերպեր, չնայած որ իրանագիտության մեջ այդպիսի բարդ հնչյոթներ չեն տարբերակվում, այլ՝ միայն *aē*, *ao*, *oi*, *əu*, *āi*, *āu* երկբարբառները՝ ավեստայում և *ai*, *au*, *āi*, *āu* երկբարբառները՝ հին պարսկերենում¹⁴: Նշված տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում *ivāē*-ն (հմմտ. ավ. *nivāēḍ*-, *paitivāēḍ(a)-*) պիտի համարել քառաբարբառակերպ, սակայն առավել հավանական է, որ հնչյունական այդ հաջորդականությունը տրոհվել է երկու վանկերի միջև՝ *nivāēḍ*-, *paiti-vāēḍ(a)-*: Այսինքն՝ նշված բառերի կազմում առավել հավանական է *vāē* եռաբարբառակերպի տարբերակումը:

Վերոհիշյալ զուգահեռներն ընդհանուր առմամբ հիմք են տալիս անելու հետևյալ հաստատումները: 1) իրանական հիշատակված փոխառությունները, ըստ ամենայնի, կատարվել են հին պարսկերենի և ավեստայի լեզվի շրջանում, երբ իրանական համապատասխանները ևս ունեին եռաբաղադրիչ կամ առնվազն երկբաղադրիչ հնչյոթային (հնչյունակապակցակա՞ն) համարժեքներ (եռաբարբառակե՞րպ, երկբարբառակե՞րպ): Ժամանակագրորեն հավանական է, որ այդ փոխառությունները կատարված լինեն մ.թ.ա. VI-III դդ., որովհետև, ըստ պատմագիտության տվյալների, հայերի և իրանական ժողովուրդների շփումներն անմիջական բնույթ են կրել մ.թ.ա. VI դ. սկսած, երբ Հայաստանը ներառվեց Աքեմենյան տերության կազմում¹⁵: 2) իրանական հին լեզուների (ընդհանուրիրանական, հին պարսկերեն, ավեստա), երբեմն նաև միջին պարսկերենի եռահնչյուն կապակցություններում հին հայերենի եռաբարբառակերպերի *ու-*ին, իբրև կանոն, համապատասխանում է երկբաղադրիչ հնչյունական կազմություն, այն է՝ «ծայնավոր + ձայնորդ (/շրթնային ձայնեղ)» կաղապարով. հմմտ. *uva* - *ուա* (հ.պ. **druvata-* - հյ. *դրուապ*), *ivā* - *ուա* (իրան. **nivāg* - հյ. *նուազ*), *uva* - *ուե* (իրան. **aruvast*, հ.պ. *aruvasta* - հյ. *արուեստ*), *ivē* - *ուէ* (իրան. *nivēḍ*. մ.պ. *nivēḍem* - հյ. *նուէր*), *ivē* - *ուի* (իրան. *nivēḍak* - հյ. *նուիրակ*): Կարծում ենք՝ այդ իրողությունը ևս, ի թիվս այլ

¹³ Расторгуева 1978, 21-23, Расторгуева, Молчанова 1981, 21, 35, 172.

¹⁴ Расторгуева 1978, 20-22.

¹⁵ Հին պարսկերենի և ավեստայի լեզվական փոքր թվագրվում է մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. IV-III դդ. (Расторгуева, Ефимов, Керимова 1978, 7, Sokolow 1967, 12, Лингвистический энциклопедический словарь 1990, 12, 142): Վերը նշված պատճառով հավանական չէ, որ հայերենի և իրանական լեզուների անմիջական շփումներն սկսված լինեին նույնիսկ մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբներին (Մանանդյան 1944, 46-60, Աճառյան 1940, 218-219, Հայ ժողովրդի պատմություն 1971, 444-452, Զահուկյան 1987, 492, Оранский 1988, 68-69, Մուրաֆյան, Վան Լոլ 2017, 20-24):

տվյալների¹⁶, վկայում է, որ առնվազն նշված փոխառությունների շրջանում հայերենի *ու*-ն պարզ հնչույթ չէր, այլ՝ երկբարբառակերպ: Պիտի կարծել, որ *ու*-ն երկբարբառային բնույթը պահպանել էր առնվազն մինչև V դարի կեսերը:

Քառաբարբառակերպերի առաջացման ժամանակի հարցը

Քառաբարբառակերպերը հանդիպում են անունների քերականական, այն է՝ գոյականների հոլովական և բայերի խոնարհման ձևերում: Ձևակազմական տեսանկյունից ներկայացնում են երկու տիպի կառուցվածքային կաղապար:

1) «Հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի ծայնավոր + (յ կիսաձայն) /վերջավորություն»:- Այս տիպին վերաբերում է երեք քառաբարբառակերպ. *ուայ* (հմմտ. *թուայ* «թոնիր. մի տեսակ վառարան» - եզ. թ., անվն. հլ.¹⁷, *լուայ* «լսեցի» - *լսել* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 1-ին դ.), *լուայց* «լսելու եմ /լսեմ/ կլսեմ / պիտի լսեմ» - *լսել* բայի ստոր. 2-րդ ապո. (*կոնյունկտիվ*), եզ. թ., 1-ին դ., *դուայ* «(ես) տվեցի» - *դալ* բայի անց. կատ. եզ. թ., 1-ին դ., *դուայց* «տալու եմ/տամ/կտամ/ պիտի տամ» - *դալ* բայի ստոր. 2-րդ ապոն., եզ. թ., 1-ին դ.),- *ուալ* (հմմտ. *լեզուալ* «լեզվով» - *լեզու* գոյ. եզ.թ., գրծ. հլ., *հովուալ* «հովիվով» - *հովի* գոյ. եզ.թ., գրծ. հլ., *դուալ* «(նա) տվեց» - *դալ* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 3-րդ դ., *լուալ* «(նա) լսեց» - *լսել* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 3-րդ դ.),- *ուոյ* (հմմտ. *անուոյ* «անիվի» - *անի* գոյ. եզ. թ., սեռ.-տր. հլ., *թուոյ* «թվի» - *թի* գոյ. եզ. թ., սեռ. հլ., *լուոյ* «լվի» - *լու* գոյ. եզ.թ., սեռ.-տր. հլ., *ծուոյ* «ծվի» - *ծու* գոյ. եզ. թ., սեռ.-տր. հլ.):

2) «Հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի երկբարբառ բաղադրիչ»:- Այս տիպին է վերաբերում *ուեա* քառաբարբառակերպը (հմմտ. *արծուեաց* «արծիվների» - *արծուի* գոյ. հզն. թ., սեռ.-տր. հլ.¹⁸, *դուեալ* «տվել/ տրվել, տված/տրված» - *դալ* անկանոն բայի անց. դերբ., *լուեալ* «լսել/լսվել, լսած/լսված» - *լսել* անկանոն բայի անց. դերբ., *դուեալ* (*լեր/լերուք*) «տրված

¹⁶ Պետրոսյան 2015, 121-124, Պետրոսյան 2017, 48-50:

¹⁷ Գրական հուշարձաններում հանդիպում է նաև *թայ*, այսինքն՝ *այ* եռաբարբառակերպային տարբերակով, որը, անշուշտ, անհամեմատ ուշ շրջանի արտասանության դրսևորում է, երբ բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքի սկզբնական *ու* (*ու*)-ն արտասանվում էր իբրև շրթնատամնային *վ* [v]: *Թուայ*-ի վերջավորությունն է ձևույթային *զրոն* (-ծ), իսկ *-յ*-ն պիտի վերագրել հիմքին, որքանով էին հայերենում, բացառությամբ որոշ դեպքերի (բայի հրամ. եղ. ձև՝ *աղա՛, մնա՛, մալոր՛, ողորմեա՛* և այլն), բառը չէր կարող ավարտվել *ա* և *ո* ձայնավորներով, դրանցից հետո գրվում էր *-յ* կիսաձայնը (հմմտ. *արքայ*, *ընծայ*, *կաթսայ*, *շոթայ*, *գոյ* և այլն): Դա նշանակում է, որ *-յ*-ն նաև արտասանվել է: Հասկանալի է, որ, ինչպես *-(ա)յ* և *-(ո)յ* վերջն ունեցող գոյականների մեծ մասը, *թուայ* ևս ենթարկվել է պարզ *ի* արտաքին հոլովման (հմմտ. *եզ.թ.*- *թուայ*, *թուայի*, *ի թուայի*, *թուայիս*, *-հզն.թ.* - *թուայք*, *զ) թուայս*, *թուայից*, *ի թուայից*, *թուայիք*): Այլ է բայի սահմ. ներկ. ձևերի *-յ*-ի հարցը: Վերջինը *հ.-ե.* **t(i) > hj*. *յ* անցման արդյունք է և, բնականաբար, բայական բուն վերջավորությունն է (հմմտ. **bhéreti > (*բերեյ >) բերե՛* «բերում է» (եզ. թ., III դ.), **bhéret(h)e > (*բերեյք >) բերե՛ք* «բերում էք» (հզն. թ., II դ.):

¹⁸ *Արծուեացի ե-ն ա-ից առաջ ի > ե* հնչյունափոխության արդյունք է, այն է՝ «արծուի + աջ = արծուեաց»:

եղիր/եղեք» - *տալ* անկանոն բայի բուն հրամ. կրավորաձև խոնրի. եզ. և հզն. թվերի 2-րդ դեմքը):

Նախ՝ գոյականական ձևերի մասին:

1) *Թուայ*-ն իրանական փոխառություն է, ըստ Հ. Աճառյանի՝ պրս. *tān* «տաքություն» ձևից, որի ավելի հին տարբերակն է *tāb*-ը՝ նույն նշանակությամբ¹⁹: Վերջինի հայկական համարժեքն է *տապ* «տաքություն, ջերմություն» բառը²⁰, փոխառված պահլավական *tap* «տաք, ջերմ» ձևից²¹: Կարծում ենք՝ առավել հավանական է, որ հյ. *թուայ*-ը ներկայացնում է պրս. *tān*-ից բաղադրված, այլ կերպ՝ վերջինին նույնարմատ *tāva* «տապակ» ձևը²², որին էլ ընդհանուր սկզբունքի համաձայն, հայերենում կարող էր ավելանալ *j* կիսաձայնը: Բառավերջի *-a*-ն հիմքակազմիչ ձայնավոր է, որն ավելի ուշ դադարել է ընկալվել որպես այդպիսին և վերածվել է բառակազմական մասնիկի՝ վերջածանցի (հմմտ. հն. պրսկ. *bagā-* «աստված», *gaušā-* «ականջ», *dastā-* «ձեռք», *pārša-* «պարսիկ», *xšāša-* «թագավորություն» և այլն)²³: Հավանական է՝ տեղի է ունեցել պրս. *tāva* > հյ. **թալա*(+ *j*) անցում²⁴, այնուհետև՝ երկշրթնային *լ* (*yl*)-ի ազդեցությամբ նախորդող *ա* (*a*)-ն ենթարկվել է շրթնայնացման՝ վերածվելով *ո* (*o*)-ի: Ըստ այդմ՝ բառն արտաբերվել է *թուայ* [toɣai]։ Իրանական լեզուներում ձայնորդական *v*-ին նախորդող դիրքում երբեմն նկատվում է *a* > *o* հերթագայություն (հմմտ. մ.պ. *bavandak* // *bovandak* > հյ. *բաւանդակ* (*/բովանդակ/*)): Իրանական *tāva*-ն արդի հայերենում պահպանվել է *թավա* «մետաղյա կոթավոր ոչ խորունկ կլոր աման՝ ուտելիք տապակելու համար» նշանակությամբ²⁵: Դեռևս նախագրային փուլում հայերենը կորցրել էր երկար ձայնավորների համակարգը²⁶, ուստի իրանական թե՛ երկար և թե՛ կարճ *ā/a*-երը հայերենում արտացոլվում էին կարճ տարբերակով: Վերոշարադրյալը հիմք է

¹⁹ Աճառյան 1940, 259, Աճառյան 1973, 200: Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (այսուհետև՝ ՀԼՊՆԺ) գրքի իրանական փոխառությունների բաժնում *թուայ*-ը բացակայում է: Անշուշտ, վրիպում պիտի համարել, որովհետև այդ բառն առկա է նույն հեղինակի ավելի ուշ հրատարակված ստուգաբանական բառարանում (Զահուկյան 2010, 273):

²⁰ Հյուբշման 2003, 252, Աճառյան 1973, 200, Աճառյան 1979, 371, Զահուկյան 2010, 720-721:

²¹ Աճառյան 1979, 371: Իրանական *tap*-ի և ցեղակից լեզուների (հին հնդկերեն, հին սլավոներեն, լատիներեն, հին իռլանդերեն և այլն) համարժեք ձևերի համար վերկանգնվում է հ.-ե. **tep-* «տաք» նախածնը (Աճառյան 1979, 371, Семереньи 1980, 68):

²² Զահուկյան 2010, 273:

²³ Расторгуева 1978, 29-30, Расторгуева, Молчанова 1981, 52,

²⁴ Մենք արդեն տեսանք, որ իրանական հին և միջին շրջանի լեզուների *v*-ն հաճախ համարժեք էր *yl* ձայնորդի, ուստի պատահական չէ, որ հայերենի իրանական փոխառություններում՝ երկու ձայնավորի միջև դիրքում և բառավերջում, *ա* (*a*)-ից հետո *v*-ն պահպանել էր ձայնորդական բնույթը (հմմտ. իրան. *xāvar* > հյ. *խաւար*, մ.պ. *armān* > հյ. *արմա*, մ.պ. *āvar* > հյ. *աւար*, մ.պ. *hān(a)šar* «նման, հավասար» > հյ. *հաւասար*, *իրան*. **nān-āz*, *ավեստա nānāza-* > հյ. *նաւազ* (ի-ա) «նավակար» և այլն):

²⁵ Աղայան 2014, 370-371:

²⁶ Որպես այդպիսին՝ գրերի գյուտի շրջանում՝ V դ. սկիզբ, փուցե մինչև VI դար, իբրև միևնույն ձայնավորի երկար և կարճ հնչույթային տարբերակներ՝ քանական հակադրությունը պահպանել էին միայն երկբարբառային ծագում ունեցող *է* (*ē*)-ն և *ե* (*e*)-ն (Պետրոսյան 2015, 121-124):

տալիս ասելու, որ փոխառյալ *թուայ*-ի *ուայ* քառաբարբառակերպը, մի կողմից, իրանական ազդեցության արդյունք է, իսկ մյուս կողմից՝ բառավերջի *ա* (*ա*)-ից հետո *յ* (*յ*) հավելելու՝ հայերենի ընդհանրական սկզբունքի դրսևորում, այն է՝ « $\bar{a}va + i(j) = o\bar{a}ij/ուայ$ »:

2) Մյուս գոյականների քառաբարբառակերպերը կազմվել են «հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի ձայնավոր + հոլովիչ» կաղապարով (հմմտ. *լեզուալ* (= *լեզ-ու+ա+լ*), *ծուոյ* (= *ծ-ու+ո+յ*), *լուոյ* (= *լ-ու+ո+յ*), *հովուալ* (= *հով-ի+ա+լ*), *անուոյ* (ան-ի+ո+յ), *թուոյ* (= *թ-ի+ո+յ*), *արծուեաց* (= *արծու+ա+ց*)), մի տարբերությամբ. ի տարբերություն առաջին երեք բառածների, որոնց հիմքի երկբարբառակերպն անհնչունափոխ է, մյուսների հիմքի երկբարբառակերպերը հնչյունափոխության արդյունք են (*հովուալ*, *անուոյ*, *թուոյ* բառածների դեպքում՝ *ի>ո*, *արծուի* բառի դեպքում՝ *ի>ե*):

Այս տեսակի քառաբարբառակերպերի կազմավորումը, ըստ իս, ներհայերենյան իրողություն է, անկախ այն բանից, թե՞ այդ տեսակին վերաբերող բոլոր բառերն են բնիկ հայկական (իմա՝ ժառանգություն հ.-ե. հիմք-լեզվից), թե՞ դրանց թվում կան նաև փոխառյալ բառեր (հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական), որովհետև քերականական ձևերի կազմության սկզբունքները և՛ գոյականների, և՛ բայերի դեպքում հայկական են, իսկ քերականական միջոցներն ունեն հնդեվրոպական ծագում:

Կասկած չի հարուցում ոչ միայն բուն *անիւ*, *արծուի*, *լեզու*, *հովիւ* գոյականների հ.-ե. ծագումը (հմմտ. **snēuo-*՝ **snēu-* «պտտել»²⁷, **dn̥gʰh̥iā-*/**dn̥gʰh̥iū-* (+ **leigʰh* «լիզել») > (*լիզու* >) *լեզու*, **(H)ou̯i-pā-* «ոչխարի հովիվ», **rgʰipio-* «արծիվ»), որոնց եզակի և հոգնակի թվերի սեռ. -տր. (*անուոյ*, *հովուեաց*, *արծուեաց*) և գործիական (*լեզուալ*) հոլովածներում առկա են *ուոյ*, *ուալ*, *ուեա* քառաբարբառակերպերը, այլև այդ հոլովածների վերջավորությունների հ.-ե. ծագումը²⁸: Բնավոր *-ո-* հոլովման պատականող *անիւ* գոյականի եզ. սեռ. *-ոյ* (*-ոյ*) վերջավորությունը սերում է հ.-ե. *-*os-jo-*ից, որի բնի ձայնավորին, հայերենի կանոնի համաձայն, բառավերջում ավելացել է *-յ* (*յ*) վերջը: Գործիականի բուն *-ւ(լ)* վերջավորությունը, որն առկա է, օր., *ա* պարզ (հմմտ. *տիտան-ալ* / *տիտան-ալ(ք)* («տիտան» գոյ. եզ./հզն. թ. գործ. հլ. ձևերը)) և *ի-ա* խառն (հմմտ. (*լեզու-ի* (եզ. սեռ.)) *լեզու-ալ* / *լեզու-ալ(ք)* («լեզու» գոյ. եզ./հզն. թ. գործ. հլ.)²⁹ հոլովման ենթարկվող գոյականների գործ.-ի եզ. և հզն. թվերի ձևերում՝ *-ալ* (*-aլ*)/*-ալ(ք)* (*-aլ-kʰ*), սերում է հ.-ե. *-*bhi-*ից, որը բարբառային,

²⁷ Այս բառի ստուգաբանությունն առաջարկել է Գ. Զահուկյանը (Զահուկյան 1987, 149, Զահուկյան 2010, 58): Հ. Աճառյանի «Արմատական»-ում այդ բառը ստուգաբանված չէ (Աճառյան 1971, 196):

²⁸ Հյուբշման 2003, 424-425, 452, 468, Աճառյան 1971, 319-320, Աճառյան 1973, 271-272, Աճառյան 1977, 117-118, Զահուկյան 2010, 91, 293-294, 466, Զահուկյան 1987, 111-157, Զահուկյան 1959, 212-224, Джаукян 1982, 137-139, Ղարազոյան 1961, 156-158:

²⁹ Հին հայերենի *ի-ա* խառն հոլովումը համապատասխանում է հ.-ե. *-*ā-* հիմքով հոլովմանը: Հմմտ. սնսկ. *jihv-ā*՝ «լեզու», լատ. *lingu-a*՝ «լեզու» (Աճառյան 1957, 402):

այսինքն՝ ոչ ընդհանուր հնդեվրոպական, երևույթ է, դրսևորվում է նաև հին հնդկերենում և լատիներենում³⁰:

Գրաբարի քերականություններում կատարյալի ձևեր համարվողները համեմատական հնդեվրոպաբանության տեսանկյունից աորիստի ժամանակային ձևեր են³¹, ուստի *դալ* և *լսել* անկանոն բայերի վերը նշված քերականական ձևերը, որոնց կազմում տարբերակվում են քառաբարբառակերպերը, պիտի դիտարկել հ.-ե. աորիստի համատեքստում: Հայտնի է, որ հ.-ե. աորիստը՝ որպես անցյալի ժամանակային իմաստ արտահայտող հիմնական ձև, վերականգնվում է հնդիրանական լեզուների³², հին հունարենի, փոյուգերենի, հին սլավոներենի և հին հայերենի (հատկապես՝ առաջին երկուսի) համապատասխան ձևերի զուգադրումով, որովհետև մյուս հին լեզուներն այդ ժամանակաձևը չեն պահպանել³³: Հայերենի աորիստը (/կատարյալը) ունի երկու տիպի խոնարհում՝ *ներգործաձև* (*действительный залог/active voice*) և *կրավորաձև* (*страдательный залог/passive voice*), այն էլ՝ ոչ բոլոր բայերի համար³⁴: Անկանոն *դալ* բայը աորիստում խոնարհվում է և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև, իսկ, օրինակ, *լսել* անկանոն բայն ունի աորիստի միայն մեկ տիպի խոնարհում, որը, ըստ էության, համապատասխանում է մյուսների ներգործաձև խոնարհմանը (հմմտ. **dō-/*dē-/*dā-* «տալ» – եգ. **թ.**, I դ. – հյ. *ἔ-φρονι* «(ես) տվեցի», սնսկ. *á-dām*, հն հուն. *ἔ-δωκα*, հն սլավ. *дѣхъ*, – II դ. – հյ. *б-фрн* «(դու) տվեցիր», հն հնդկ. *á-dāh/(s)*, հն հուն. *ἔ-δωκας*, հն սլավ. *дѣ, дѣстѣ*, – III դ. – հյ. *б-фр* «(նա) տվեց», սնսկ. *á-dāt*, հն հուն. *ἔ-δωκε(ν)*, հն սլավ. *дѣ, дѣстѣ, -hqñ. **թ.***, I դ. – հյ. *φρνω* «(մենք) տվեցինք», սնսկ. *á-dāma*, հն հուն. *ἔ-δομε(ν)*, հն սլավ. *дѣхомъ*, – II դ. *б-фрн* «(դուք) տվեցիք», սնսկ. *á-dāta*, հն հուն. *ἔ-δοτε*, հն սլավ. *дѣстѣ*, – III դ. *б-фрн* «(նրանք) տվեցին», սնսկ. *á-duh/(s)*, հն հուն.

³⁰ Meillet 1936, 67-75, Мейе 1938, 303-304, 307-308, Савченко 1974, 195, 205, Семереньи 1980, 170, Джаукян 1982, 138-139, Красухин 2004, 117, 125: Ըստ Ա. Մեյեի՝ հ.-ե. բնի ծայնավորի և վերջավորության միջև սահմանները հայերենում չեն գիտակցվում, դրանք միաձուլվել են, ուստի երկուսը միասին պիտի դիտել իբրև վերջավորություն (Meillet 1936, 67, Աճառյան 1957, 395): Անշուշտ, ընդհանուր առմամբ Ա. Մեյեն իրավացի է: Հօգուտ այդ տեսակետի է վկայում, օրինակ, խառն հոլովումների առաջացումը հայերենում, որոնց այլ լեզուներում հաճախ համապատասխանում է հ.-ե. բնավոր կամ անբուն հոլովումներից մեկը: Այդ երևույթը, սակայն, բացարձակ չէ: Ոչ հազվադեպ հայերենը թեք ձևերում պահպանել է հ.-ե. «բնի ծայնավոր + վերջավորություն» կաղապարը, ինչպես՝ *գայլ-գայլ-ո-յ ...գայլ-ո-վ ...- գայլ-(թ), գայլ-ո-ց ... գայլ-ո-վ-(թ)*, որը հ.-ե. բնավոր -օ- հոլովման արտահայտություն է: Անվանականում այդ կաղապարը չի պահպանվել (հմմտ. **ul(k-o-s > հյ. գայլ- (ø), *ul(k-ō-s > գայլ-թ)*):

³¹ Դրանք որպես աորիստի ձևեր են ներկայացվում նաև հայերենի համեմատական քերականություններում (Աճառյան 1957, Աճառյան 1959, 359-372, Джаукян 1982, 160-192):

³² Հնդիրանական լեզուներից աուգմենտը աորիստի պարտադիր բաղադրիչ է եղել հին հնդկերենում, սանսկրիտում և հին պարսկերենում, իսկ ավեստայի լեզվում ունեցել է կամընտրական բնույթ (Расторгуева 1978, 50-51, Sokolow 1967, 90-91):

³³ Мейе 1938, 216, Савченко 1974, 276, Барроу 1976, 283, Красухин 2004, 180-181.

³⁴ Հին հնդկերենի բային բնորոշ են, օրինակ, *ներգործական* (ակտիվ / active) և *միջին* (մեդիում / middle voice) սեռերը (Елизаренкова 1982, 271-350):

ἔ-δοσαν, հն սլավ. *дѣша*)³⁵: Զուգադրումների այս շարքից երևում է, որ ցեղակից ձևերից և ոչ մեկի կազմում չկա ոչ միայն քառաբարբառ (/քառաբարբառակերպ), այլև՝ եռաբարբառ (/եռաբարբառակերպ): Այդպիսիք չկան նույնիսկ հգն. թ. 1-ին դեմքում, որտեղ հայերենն ունի *ուա* եռաբարբառակերպը՝ *տրուաք*, որն ընդհանուր է ներգործածն և կրավորածն խոնարհումների համար: Նույնը կարելի է տեսնել *լսել* բայի աորիստի ձևերում (հմմտ. **kleu-* «լսել» - հյ. լուաւ «(նա) լսեց», հն հուն. *ἔ-κλυε* «(նա) լսեց», հն հնդկ. *śruv-uḥ* «(նրանք) լսեցին» և այլն): Առավել ևս այդպիսիք չկան նշված բայերի եղանակաժամանակային այլ ձևերում՝ ուղիղ կամ թեք (հմմտ. հն հնդկ. *śru-* «լսել», *śrutá-* (համարժեք է հին հայերենի *լուեալ* անցյալ դերբային) «լսել/լսվել/լսած/լսված», *śṛṇóti* «(նա) լսում է»), հն հուն. *κλύω* «լսել», հն սլավ. *слышати /slyšati/* («լսել» բայի աորիստի երկակի թ., III դ., բառացի՝ «(նրանք) երկուսով լսեցին»)): Միայն հուն. աորիստի եզ. թ. 3-րդ դեմքում տեսականորեն կարող էր դրսևորվել *սե* երկբարբառ՝ *ἔ-κλυε* «(նա) լսեց», սակայն հին հունարենի քերականություններում այդպիսի երկբարբառ չի տարբերակվում³⁶: Ըստ ամենայնի՝ *սե*-ն «բնի ձայնավոր + խոնարհման վերջավորություն» հաջորդականություն էր և արտաբերվել է երկու ձայնավորի միջև դրսևորվող հորանջով՝ ներկայացնելով երկու առանձին ձայնավոր հնչույթներ:

Նշված հանգամանքները հիմք են տալիս ասելու հետևյալը:

1) Հին հայերենի աորիստի ձևերում հանդիպող քառաբարբառակերպերը ևս ոչ միայն հնդեվրոպական ժառանգություն չեն, որովհետև ընդհանուր հնդեվրոպականում այդպիսիք պարզապես չեն եղել, ավելին՝ հիմք-լեզուն չի ունեցել նաև եռաբարբառներ (/եռաբարբառակերպեր), որոնցից, կիսաձայնական վերջավորությունների հավելումով կարող էին սերվել քառաբարբառները (/քառաբարբառակերպերը), այլև հավանական չէ, որ հայերենում դրանք զարգանային հիմք-լեզվից առանձնանալուց հետո՝ սկզբնական փուլում: Որպեսզի քառաբարբառակերպերի առաջացումը հայերենում սկսվեր այդքան վաղ, դրանց նախադրյալները պիտի դիտարկվեին արդեն ընդհանուր հնդեվրոպական լեզվում: Ավելին, ընդհանուր հնդեվրոպականում քառաբարբառների (/քառաբարբառակերպերի) թեկուզև սաղմնային դրսևորման դեպքում դրանց անդրադարձներն (ռեֆլեքսները) այս կամ այն կերպ կդիտարկվեին առնվազն հին հնդկերենում, հին պարսկերենում և հին հունարենում, որոնց աորիստը հայերենի աորիստի հետ ունի որոշակի ընդհանրություններ: Այդպիսին է, օրինակ, նախահավելվածի (աուգմենտ) առկայությունը բոլոր չորս լեզուներում (հնդարիական լեզուներում՝ *á-*, հին հունարե-

³⁵ Հայերենից բացի, մյուս լեզուների աորիստն ուներ նաև երկակի թվի ձևեր, բայց դրանք չենք նշում, որովհետև հին հայերենը չուներ (առնվազն՝ չեն պահպանվել) դրանց զուգահեռները:

³⁶ Соболевский 1948, 8-12, Козаржевский 1975, 13, Мейчен 2002, 8-9.

նում՝ *é-/ē-, á-/ā-* (*/é-/í-, α-/ώ-*), հին հայերենում՝ *e-/ē-* (*/ē-, ē-*). հմմտ. *ե-մուր* «մտավ», *է-առ* «բռնեց, վերցրեց»³⁷:

2) Հին հայերենի աորիստի կազմում քառաբարբառակերպերը ձևավորվել են հատկապես բառավերջի դիրքում՝ ներառելով քերականական վերջավորությունները: Եթե նկատի ունենանք, որ *հ.-ե.* երկու տարբեր լեզվաճյուղեր ներկայացնող հին հնդկերենն ու հին հունարենը, ըստ քերականական զուգաբանությունների, հայերենի հետ ունեն մերձավորության ամենից բարձր աստիճանը³⁸, սպասելի էր, որ այդ լեզուները ևս նույն դիրքում կազմավորեին քառաբարբառներ (*քառաբարբառակերպեր*), եթե վերջինների առաջացումն ունենար *հ.-ե.* հիմք կամ գոնե հատուկ լիներ բարբառային որոշակի խմբի: Մի բան, որ, ինչպես տեսանք, տեղի չի ունեցել:

3) Ավեստայում աորիստը որոշակի բառաձևերում ունեցել է եռաբարբառային վերջ (հմմտ. ավ. *mraoi* «ասված է» (բառացի՝ «նրա կողմից ասվել է»), *srāvi* «(նա) լսվեց» (բառացի՝ «(նա) լսված եղավ»), *ərənāvi* [*r̥nāvi*] «(նա) պարգևատրվեց (բառացի՝ «(նա) պարգևատրված եղավ»)), հին պարսկերենում՝ նախահավելված³⁹ և քառաբարբառային վերջ (հին պարսկերենում նույն ձևերն ավեստայի *-i* վերջավորության փոխարեն ստանում են *-iy* վերջը, ինչպես՝ *-āviy*), որը չունեն ավեստայի համապատասխան ձևերը⁴⁰:

4) Ի տարբերություն հին հնդկերենի, հին հունարենի, հին սլավոներենի և հին հայերենի, որոնցում աորիստն ունի համակարգային արտահայտություն, իրանական հին լեզուներից ավեստայում «աորիստի համակարգի» մասին դժվարությամբ կարող է խոսք լինել, իսկ հին պարսկերենում աորիստին կարող են վերագրվել «միայն մի քանի առանձին ձևեր, այն էլ՝ վերապահումներով»⁴¹: Որպես ժամանակային ձև՝ աորիստը չի տարբերակվում միջին իրանական լեզուներում⁴²:

5) Ավեստայի աորիստային ձևերում չկան քառաբարբառներ (*քառաբարբառակերպեր*), իսկ հին պարսկերենի աորիստային ձևերում տարբերակվող քառաբարբառները (*քառաբարբառակերպերը*) հնչյունական կազմի

³⁷ Այն, որ նախահավելվածը (աուգմենտը)՝ որպես ձևակազմական բաղադրիչ, բնորոշ է միայն հնդ-իրանական հին լեզուների, հին հունարենի, փյուգերենի և հին հայերենի աորիստին (այդ մասին կը չունի հին սլավոներենի աորիստը), համարվում է բարբառային նորակազմություն (Meïe 1938, 255, Барроу 1976, 283, Савченко 1974, 274): Հին հնդկերենում, աորիստից բացի, աուգմենտ կարող էին ստանալ նաև անցյալի իմաստ արտահայտող մյուս ժամանակները՝ անկատարը (*imperfect/umperfect*) և վաղակատար անցյալը (*pluperfect/плюсквамперфект*) (Барроу 1976, 283): Ըստ Ա. Մելի՝ լեզուների այդ խմբին բնորոշ էին այլ ընդհանուր հատկանիշներ ևս, ինչպես **mē* (սնսկ. *mā*, հյ. *mī* (*մի*), հուն. *μή*) արգելական մասնիկը և այլն (Meïe 1938, 255):

³⁸ Джаукян 1982, 204, Զահուկյան 1987, 103.

³⁹ Ավեստայի աորիստի նախահավելվածը պարտադիր չէր, ի տարբերություն հին պարսկերենի, որի աորիստը սովորաբար հանդես է եկել նախահավելվածով (Пасторгуева 1978, 50):

⁴⁰ Пасторгуева 1978, 51, Sokolow 1967, 91.

⁴¹ Соколов 1979, 259.

⁴² Пасторгуева, Молчанова 1981, 97-136, 209-227, Лившиц, Хромов 1981, 467-503.

ընդհանրություն չունեն հին հայերենի աորիստային ձևերի քառաբարբառակերպերի հնչյունական կազմի հետ:

6) Հին հայերենի՝ *-ի* վերջն ունեցող բայաձևը չէր կարող ստանալ նաև *-յ* (*-յ*), այլ կերպ՝ բայաձևը չէր կարող ունենալ *-իյ* (*-իյ*) վերջը (հմմտ. *երկի* «(նա) վախեցավ», *թռի* «(նա) թռավ», *հանգի* «(նա) խաղաղվեց»)⁴³, այնինչ՝ հին պարսկերենում դա հնարավոր էր:

Վերոշարադրյալը բավարար հիմք է տալիս ասելու, որ ինչպես իրանական հին լեզուների աորիստի ձևերում է եռաբարբառների (/եռաբարբառակերպերի) և քառաբարբառների (/քառաբարբառակերպերի) առաջացումն այդ լեզուների ինքնուրույն, իմա՝ ներքին օրինաչափություններով պայմանավորված զարգացման արտահայտություն, այնպես էլ դրանք ինքնուրույն զարգացման արդյունք են հին հայերենում: Հետևաբար, չնայած որ հայերենի՝ իրանական գոյականական փոխառությունների քառաբարբառակերպերը կարող էին առաջանալ փոխատու լեզվի ուժեղ ներգործությամբ, նույնը հնարավոր չէ ասել բայական (իմա՝ աորիստի) ձևերում առկա քառաբարբառակերպերի կազմավորման մասին: Բնականաբար, վերոհիշյալ իրողությունները հիմք չեն տալիս նաև ասելու, թե քառաբարբառակերպերի առաջացումը բնորոշ էր ցեղակից լեզուների որոշակի խմբի, այսինքն՝ ուներ տարածաշրջանային բնույթ:

Եզրակացություններ

1) Հին հայերենի եռաբարբառակերպերի ու քառաբարբառակերպերի առաջացումը ետինդեվրոպական իրողություն է, հետևաբար դրանց տարածամանակյա քննությունը չի կարող ներառել ընդհանուրինդեվրոպական փուլը: Հավանական չէ նաև, որ եռաբարբառակերպերի (/քառաբարբառակերպերի) կազմավորումն սկսվեր հ.-ե. հիմք-լեզվի տրոհմանը անմիջականորեն հաջորդող շրջանում, որովհետև այդ դեպքում դրանց նախադրյալները կնկատվեին ընդհանուրինդեվրոպական լեզվում, և այդպիսիք կդիտարկվեին հ.-ե. հին լեզուներից գոնե մի քանիսում, մասնավորապես՝ աորիստի ժամանակաձևեր ունեցողներում:

2) Եթե եռաբարբառակերպերն ու քառաբարբառակերպերը լինեին միայն իրանական փոխառությունների կազմում, ոչ միայն վստահորեն կարելի էր ասել, որ դրանք հայերենում առաջացել են իրանական փոխառությունների ուժեղ ազդեցությամբ, այլև կարելի էր նշել դրանց առաջացման որոշակի ժամանակաշրջան՝ մ.թ.ա. VI-III դդ., երբ Հայաստանն անցավ Աքեմենյան

⁴³ Հին հայերենում առհասարակ *-ի* և *-է* վերջն ունեցող բառերը նշված վերջավորություններից հետո չէին կարող ստանալ *-յ* (հմմտ. *խօսի* «(նա) խոսում է», *խորհի* «(նա) խորհում է», *իջի* «(ես) իջա», *գրէ* «(նա) գրում է», *բազէ*, *րոպէ* և այլն), ի տարբերություն *-ա*-ով և *-ո*-ով ավարտվողների, որոնք, ինչպես արդեն նշել ենք, ընդհակառակն, միայն առանձին դեպքերում այդ հնչյուններից հետո *-յ* չեն ստացել:

Պարսկաստանի տիրապետության տակ: Բայց քանի որ այդ կազմությունները կան նաև բայական, մասնավորապես՝ աորիստի ձևերում, որոնք ակնհայտորեն հ.-ե. ժառանգություն են, ապա մեծ հավանականությամբ դրանց առաջացումը նախորդել է իրանական փոխառությունների դարաշրջանին և ավելի հավանական պիտի համարել, որ եռաբարբառային (/քառաբարբառային) կազմությունների առկայությունը հայերենում նպաստավոր հող է ստեղծել իրանական փոխառություններում դրանց պահպանման համար:

Գրականություն

- Աղայան Է.Բ. 2014, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, «Ման-մար», 1328 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1940, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 356 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1011 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1959, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 593 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 698 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 687 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 635 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ:
- Հայ ժողովրդի պատմություն 1971, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 991 էջ:
- Հյուբշման Հ. 2003, Հայերենի քերականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 604 էջ:
- Ղարազյուլյան Թ.Ա. 1961, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 181 էջ:
- Մանանդյան Հ. 1944, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, «Հայպետհրատ», 444 էջ:
- Մուրաֆյան Կ.Ա., Լոկ Է.Վ. 2017, Հայաստանի պատմական ատլաս (Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչև XXI դար), Երևան, «Տիգրան Մեծ», 144 էջ:
- Պետրոսյան Վ.Զ. 2015, Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը, ՎԷՄ, N 3, էջ 121-124:
- Պետրոսյան Վ.Զ. 2017, Հին հայերենի ծայնավորական համակարգի ծագումը և հնչաբանական արժեքայնությունը, ԲԵՀ. Հայագիտություն, N 2, էջ 48-50:
- Ջահուկյան Գ.Բ. 1959, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, ԵՊՀ հրատ., 409 էջ:
- Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:
- Ջահուկյան Գ.Բ. 1998, Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Երևան, «Անանիա Շիրակացի», 228 էջ:
- Ջահուկյան Գ.Բ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 820 էջ:
- Барроу Т. 1976, Санскрит, Москва, «Прогресс», 411 с.
- Джаукян Г.Б. 1982, Сравнительная грамматика армянского языка, Ереван, изд. Акад. наук Арм. ССР, 274 с.

- Елизаренкова Т.Я. 1982, Грамматика ведийского языка, Москва, «Наука», 439 с.
- Иванов В.В. 1963, Хеттский язык, Москва, «ИВЛ», 222 с.
- Козаржевский А.Ч. 1975, Учебник древнегреческого языка, Москва, «ИМУ», 408 с.
- Красухин К.Г. 2004, Введение в индоевропейское языкознание, Москва, «Академия», 320 с.
- Краузе В. 1959, Тохарский язык, Тохарские языки (сборник статей), Москва, ИИЛ (Издательство иностранной литературы), 222 с.
- Лившиц В.А., Хромов А.Л. 1978, Согдийский язык, Языки Азии и Африки, т. II, Москва, «Наука», 440 с.
- Лингвистический энциклопедический словарь 1990, Москва, «Советская энциклопедия», 685 с.
- Мейе А. 1938, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва-Ленинград, «Госсоцэкизд», 510 с.
- Мейчен Дж.Г. 2002, Учебник греческого языка Нового завета, Москва, РБО (Российское библейское общество), 239 с.
- Молчанова Е.К. 1978, Среднеиранские языки, Языки Азии и Африки, т. II, Москва, «Наука», 440 с.
- Общее языкознание (методы лингвистических исследований) 1973, Москва, «Наука», 318 с.
- Оранский И.М. 1988, Введение в иранскую филологию, Москва, «Наука», 389 с.
- Прокош Э. 1954, Сравнительная грамматика германских языков, Москва, «ИИЛ», 379 с.
- Расторгуева В.С. 1978, Древнеиранские языки (авестийский и древнеперсидский), Языки Азии и Африки, т. II, Москва, «Наука», 440 с.
- Расторгуева В.С., Ефимов В.А., Керимова А.А. 1978, Иранские языки. Введение, Языки Азии и Африки, т. II, Москва, «Наука», 440 с.
- Расторгуева В.С., Молчанова Е.К. 1981, Парфянский язык, среднеперсидский язык, Основы иранского языкознания (среднеиранские языки), Москва, «Наука», 440 с.
- Расторгуева В.С., Молчанова Е.К. 1981, Среднеперсидский язык, Основы иранского языкознания (среднеиранские языки), Москва, «Наука», 544 с.
- Савченко А.Н. 1974, Сравнительная грамматика индоевропейских языков, Москва, «Высш. школа», 412 с.
- Семереньи О. 1980, Введение в сравнительное языкознание, Москва, «Прогресс», 407 с.
- Соболевский С.И. 1948, Древнегреческий язык, Москва, ИЛИЯ (Издательство литературы на иностранных языках), 614 с.
- Соколов С.Н. 1979, Древнеперсидский язык, Основы иранского языкознания (Древнеиранские языки), Москва, «Наука», 389 с.
- Фридрих И. 1952, Краткая грамматика хеттского языка, Москва, «ИИЛ», 199 с.
- Meillet A. 1936, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, Imprimerie des PP. Mekhitharistes, 205 p.
- Sokolow S.N. 1967, The Avestan Language, Moscow, "Nauka", 120 p.

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՔԱՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳԵՐԸ**

Վարդան Պետրոսյան

Ամփոփում

Հին հայերենի *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի*, *ուո* եռաբարբառակերպերը առավելապես հանդիպում են իրանական փոխառությունների կազմում, իսկ *ուայ*, *ուաւ*, *ուեա*, *ուոյ* քառաբարբառակերպերը՝ հ.-ե. ծագման գոյականական և բայական բառաձևերում: Եթե տեսականորեն հնարավոր է հին հայերենում եռաբարբառային կազմությունների առկայությունը պայմանավորել իրանական փոխառություններով կամ դրանց համար ենթադրել իրանական գործոնի ուժեղ ազդեցություն, ապա նույնը չի կարելի ասել քառաբարբառային կազմությունների մասին: Վերջիններն արտահայտվում են, մասնավորապես, *տալ* և *լսել* անկանոն բայերի աորիստի ձևերում, որոնք ունեն ընդհանուրինդեվրոպական ծագում, ինչպես նաև զուգահեռներ հնդիրանական լեզուներում, հին հունարենում, փյուրգերենում և հին սլավոներենում: Այդ իրողությունը հիմք է տալիս առաջադրելու հետևյալ դրույթները: 1) Հին հայերենի քառաբարբառակերպերը՝ ա) ետինդեվրոպական երևույթ են, քանզի դրանց նախադրյալները չեն դիտարկվում հ.-ե. հիմք-լեզվում, բ) դրանք զուտ հայերենյան իրողություններ են, որովհետև այդպիսիք չունեն ոչ միայն հ.-ե. մյուս լեզուները, այլև այն ցեղակիցները, որոնց բնորոշ է աորիստի ժամանակային համակարգը: 2) Հայերենի քառաբարբառակերպերն առաջացել են նախքան իրանական ազդեցությունը, ըստ ամենայնի՝ աորիստի համակարգի ձևավորմանը զուգահեռ: 3) Իրանական փոխառությունների եռաբարբառային կազմությունները ավելի շուտ հայերենի հնչույթային համակարգում եռաբարբառակերպերի դիրքերը կայունացնող նշանակություն են ունեցել, քան դրանք հայերենի հնչույթային համակարգ ներմուծող:

Բանալի բառեր՝ եռաբարբառակերպ, քառաբարբառակերպ, հին հայերեն, հնդիրանական լեզուներ, հին հունարեն, աորիստ, իրանական փոխառություն:

**ДИАХРОНИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ДРЕВНЕАРМЯНСКИХ
ТРИФТОНГАЛЬНЫХ И ТЕТРАФТОНГАЛЬНЫХ ОБРАЗОВАНИЙ**

Вардан Петросян

Резюме

Древнеармянские трифтонгоиды *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի*, *ուո* преимущественно встречаются в составе иранских заимствований, а тетрафтонгоиды *ուայ*, *ուաւ*, *ուեա*, *ուոյ* – в существительных и глагольных словоформах индоевропейского происхождения. Если теоретически наличие трифтонгоидных образований в древнеармянском языке можно обусловить иранскими заимствованиями или предположить для них сильное воздействие иранского фактора, то нельзя сказать

то же самое о тетрафтонгальных образованиях. Последние проявляются, в частности, в аористных формах неправильных глаголов *լիւիլ* «дать» и *լսել* «слышать», которые имеют общеиндоевропейское происхождение, а также параллельно в индоиранских языках, в древнегреческом, фригийском и древнеславянском. Этот факт дает основания для выдвижения следующих положений: 1) древнеармянские тетрафтонгоиды: а) постиндоевропейские явления, поскольку их предпосылки не просматриваются в основе индоевропейского языка; б) они исключительно армянские явления, ибо подобных нет не только ни в одном индоевропейском языке, но и в родственных языках, которым свойственна временная система аориста; 2) древнеармянские тетрафтонгоиды возникли до иранского влияния, по-видимому, параллельно с формированием системы аориста; 3) трифтонгальные образования иранских заимствований скорее всего имели значение стабилизации позиции трифтонгоидов в фонологической системе армянского языка, а не введения их в эту систему.

Ключевые слова – трифтонгоид, тетрафтонгоид, древнеармянский, индоиранские языки, древнегреческий, аорист, иранские заимствования.

DIACHRONIC CHARACTERISTICS OF OLD ARMENIAN TRIPHTHONGOID AND TETRAPHTHONGOID FORMATIONS

Vardan Petrosyan

Abstract

The old Armenian *niw*, *nib*, *nit*, *nih*, *nin* triphthongoids are mostly observed in the Iranian loan words, whilst *nuiw*, *nuii*, *nibw*, *ninj* tetraphthongoids in word forms derived from nouns and verbs of Indo-European origin. If theoretically it is possible to prove the existence of triphthong forms in old Armenian through Iranian borrowings or suggest the strong Iranian influence, the same cannot be said about the formation of tetraphthongs. The latter find their expression, particularly, in the aorist forms of the irregular verbs of *լիւիլ* “give” and *լսել* “listen”, that have a general Indo-European origin, as well as parallels in Indo-Iranian languages, old Greek, Phrygian and old Slavonic. This provides grounds to suggest the following theses: 1) old Armenian tetraphthongoids are

- a) post Indo-European phenomena, since no prototypes have been observed in Indo-European parent language; b) they are purely Armenian phenomena since no other Indo-European languages, even those related to them with the aorist time category possess them; 2) Armenian tetraphthong forms emerged before the Iranian influence, most probably, parallel with formation of aorist system; 3) The triphthong forms of Iranian borrowings have been used to stabilize the triphthong forms in the phonemic system of Armenian, rather than to importing them into it.

Key words – triphthongoids, tetraphthongoids, old Armenian, Indo-Iranian languages, old Greek, aorist, Iranian borrowings.